ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՍԵԴԱՆ ԹԱՓՔՈՎ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՆՄԱՆ
N ԴՇԻԳ-ՇՀԱՊՁԲ-15-11/21-16

ք. Երևան «15» «ապրիլի» 2015թ.

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար **Արմեն Գևորգյանի**, որը գործում է կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և **«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ-ն**, ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն **Վ. Գզրարյանի (այսուհետև՝ Վաճառող),** մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված տեսակի ապրանքներ, /այսուհետև՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել սույն պայմանագրի N2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում մատակարարված սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված տեսակի Ապրանքը և վճարել դրա համար՝ սույն պայմանագրի N3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցին համապատասխան:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին, ք. Երևան, Հալաբյան 41ա հասցեում:

2.2 **Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առավելագույնը տասն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:**

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից,

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարել սույն Պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը,

բ) Հրաժարվել սույն Պայմանագիրը կատարելուց:

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք սույն Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը,

3.1.4 Միակողմանի լուծել սույն Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը,

3.1.4.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Ձննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

,.2 Գնորդը պարտավոր է.

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2.3 Ապրանքը ընդունելու դեպքում սույն Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով հաստատված տեխնիկական բնութագրին համապատասխան Ապրանքը,

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով,

3.3.3 Գնորդից պահանջել հատուցելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները,

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.7 Սույն Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին անհապաղ գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **15000000 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամ**: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է Պայմանագրի Հավելված N2-ում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ 20 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ավելի, քան տվյալ ժամանակահատվածի համար սույն պայմանագրի N3 հավելվածով նախատեսված գումարի չափից և ոչ ուշ, քան **25.12.2015թ**: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են, բայց ոչ ուշ քան **25.12.2015թ.**:

5. Ապրանքի որակը և երաշխիքը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Վաճառողն Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրած հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:
6.2 Արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը.
ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն Պայմանագրով նախատեսված միջոցները:
բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
6.3 Գնորդը հանձնման–ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման–ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնված Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:
7.2 Վաճառողի կողմից սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0.05 (զրո ամբողջ զրո հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:
7.3 Սույն Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:
7.4 Պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:
7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ զրո հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
7.6 Պայմանգրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կախատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշաժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 **Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի միջև փոխադարձ պարտավորությունների կատարման ավարտը՝ 25.12.2015թ.:**

9.2 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և/կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքուն գնումների մասին օրենսդրության համաձայն հինք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասները՝ այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.4 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ, բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) պայմանագրով նախատեսված ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-ների նախարարության հետ:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների կամ, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

9.5 Ապրանքների մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.7 Սույն պայմանագիրը և N1, N2, N3 հավելվածները միասին կազմված են **9 (ինը)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.9 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմ	**«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ**
Ք. Երևան, Հալաբյան 41ա	Հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի 22
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900013194049	Հ/Հ՝ 1570003667300100
ՀՎՀՀ 02508264	ՀՎՀՀ՝ 01557589
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«15» « 04 » 2015 թ. կնքված
N ԴԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-15-11/21-16 պայմանագրի

ՍԵԴԱՆ ԹԱՓՔՈՎ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՆՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
(ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ)

Հ/Հ	Գնման առարկայի նկարագիրը	Չափման միավորը	Տեխնիկական բնութագիրը
1.	Սեդան թափքով ավտոմեքենա (TOYOTA CAMRY)	հատ	**Շարժիչը՝ (2AR-FE կամ համարժեքը)** • Գլանների քանակը՝ **4 շարային** • Փականների մեխանիզմ՝ **16 փական (DOHC/Dual VVT-I կամ համարժեքը)** • Վառելիքի ներցայտման համակարգ՝ **SFI կամ համարժեքը** • Աշխատանքային ծավալը (սմ^3)՝ **2494 սմ^3** • Գլանի տրամագիծն ու քայլը (մմ)՝ **90.0x98.0** • Սեղմման աստիճանը՝ **10.4:1** • Հզորություն (կվ/պտտ/րոպե)՝ **133/6000** • Ոլորող մոմենտ՝ **231/4100** **Փոխանցման տուփը՝** • Փոխանցման տուփը՝ **ավտոմատ/6 աստիճան/** **Արտանետման համակարգ՝** • Եվրո արտանետման ստանդարտ՝ **EURO 4** • Ածխածնի օքսիդ՝ **CO(գ/կմ)՝ 0.131** • Ածխաջրածիններ՝ **THC(գ/կմ)՝ 0.017** • Ազոտի օքսիդներ՝ **Nox(գ/կմ)՝ 0.014** • Աղմուկ՝ **ԴԲ(Ա)՝ 71.4** **Արգելակներ՝** • Առջևում՝ **հովացվող սկավառակային** • Հետևում՝ **սկավառակային** **Կախոցներ՝** • Առջևում՝ **մակֆերսոն տիպի, 16/17 դյույմ անիվների համար** • Հետևում՝ **երկու լծակներով, 16/17 դյույմ անիվների համար** **Հարմարավետություն՝** • Վատ ճանապարհներ փաթեթ՝ **«Վատ ճանապարհներ փաթեթ» +10մմ-ով ավելացված լուսածերպ** • Փաթեթ՝ հարմարեցված ցուրտ կլիմայով երկրների համար՝ **Եվրոպա** • Օգտագործողի ուղեցույց՝ **ռուսերեն** • Ղեկանիվ **ձեռքով կարգավորվող** • Ղեկային համակարգ՝ **էլեկտրաուժեղարար** • Բոլոր կողային ապակիների էլեկտրաամբարձիչներ՝Էլ. Կառավարում • Բանալիներ՝ **3 բանալի** • Անձրևի սենսոր՝ Առկա են

			• Մեկնարկում՝ **բանալիի միջոցով** • Աքսեսուարների միացում՝ **մեկ հատ 12V վարդակ** • Կոճակներ ղեկանիվի վրա՝ **աուդիո+հեռախոս** • Արագաչափ՝ **կմ/ժ** • Բազմաֆունկցիոնալ դիսփլեյ՝ **4.2 դյույմանոց** • Լվացման հեղուկի նվազման ցուցիչ՝ Առկա են • Աուդիո մուտքեր՝ USB 1, VTR (AUX)1 • Կայանման սենսոր՝Առկա են • Պահուստային անվադող՝ **լիարժեք** • Կենտրոնական փականի հեռակառավարում՝ **բանալի** • Նստելատեղերի տաքացում՝ **միայն առջևում** Կլիմատ-կոնտրոլ՝ 2 **գոտի** • Օդի զտիչԱռկա են • Թթվածնի Իոնիզատոր՝ Առկա են • Աուդիոհամակարգ՝ **մոնիտոր, 6 բարձրախոս, Bluetooth** **Անվտանգություն՝** • Հակաառևանգման համակարգ՝ **իմոբիլայզեր+ձայնային ազդանշան** • ABS և Assist՝ **պարտադիր առկայություն** • VSC (հակակողասահքային համակարգ) **պարտադիր առկայություն** • Անվտանգության բարձիկներ՝ **8 հատ** **Արտաքին՝** • Մեքենայի գույնը՝ **սև** • Մեքենայի արտաքին չափերը՝ **երկարությունը՝ 4825մմ, լայնությունը՝ 1825մմ, բարձրությունը՝ 1480մմ, առջևի անիվների միջև հեռավորությունը՝ 1575մմ, հետևի անիվների միջև հեռավորությունը՝ 1565մմ, առջևի և հետևի անիվների միջև հեռավորությունը՝ 2775մմ** • Անիվներ և սկավառակներ՝ **215/60r16, 5j os 45 (ալյումինե)** • Կողային ապակիներ՝ **բաց-կանաչ, հակաուլտրամանուշակագույն ֆիլտրով** • Խլացուցչի խողովակ՝ **1 հատ** • Առջևի դիմապակի՝ **կանաչ** • Հետևի դիմապակի՝ ՝ **բաց-կանաչ, հակաուլտրամանուշակագույն ֆիլտրով** • Հետևի դիմապակու տաքացուցիչ՝ **պարտադիր առկայություն** • Կենտրոնական փական՝ **պարտադիր առկայություն** • Դռան արտաքին բռնակներ՝ **ներկված** • Արտաքին տաքացվող և էլեկտրակառավարվող հայելիներ՝ **պարտադիր առկայություն** **Լուսարձակներ՝** • Տեսակը՝ **Հալոգենային** • Լուսարձակների կարգավորում՝ **ձեռքով** • Լուսարձակների լվացուցիչ՝ Առկա են • Առջևի հակամշուշային լապտերներ՝ Առկա են

			• Լույսի սենսոր՝ Առկա են • Ցերեկային դիոդային լույսերՀետևի լուսարձակներ՝ **դիոդային** **Ինտերիեր՝** • Փոխանցումատուփի բռնակ՝ **6-աստիճան/փայտ+կաշի** • Ղեկանիվ՝ կտորե երեսվածքով • Սրահի լուսավորում՝ **1 առջևում+1 հետևում** • Պահարանի լուսավորումառկա են • Առջևի ուղևորի անհատական լույս՝ **+LED** • Հետևի ուղևորի անհատական լույս՝ Առկա են • Սրահի հետադարձ հայելի՝ **բլյում համակարգով** • Դռների բռնակները՝ **կաշեպատ** • Բաժակի համար նախատեսված բռնակներ՝ **2 առջևում+2 հետևում** • Մոխրաման՝ **1 առջևում+2 հետևում** • Կրակայրիչ՝ առկա են • Հետևի նստելատեղեր՝ **ծալվող 60/40** • Սրահի պաստառը՝ **կտոր** **Ավտոմեքենայի վազքը չի կարող գերազանցել 1000 կիլոմետրը, իսկ արտադրության տարեթիվը պետք է համընկնի ձեռքբերման տարեթվի հետ:** **Երաշխիքային սպասարկման նվազագույն ժամկետը՝ 36 ամիս:**

ԳՆՈՐԴ

ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմ
Ք. Երևան, Հալաբյան 41ա
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900013194049
ՀՎՀՀ 02506264

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի 22
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570003667300100
ՀՎՀՀ՝ 01557589

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2

«15» « 04 » 2015 թ. կնքված

N ԴԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-15-11/21-16 պայմանագրի

ՍԵԴԱՆ ԹԱՓՔՈՎ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
(ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ)

Հ/Հ	Գնման առարկայի նկարագիրը	Չափման միավորը	Նախատեսվում է ձեռք բերել 2015թ. ընթացքում, ընդ որում					
			Միավորի գինը (ՀՀ դրամ)	I եռամսյակ (քանակը)	II եռամսյակ (քանակը)	III եռամսյակ (քանակը)	IV եռամսյակ (քանակը)	Ընդամենը (քանակը)
1.	Սեդան թափքով ավտոմեքենա (TOYOTA CAMRY)	հատ	15000000	-	1	-	-	1

ԳՆՈՐԴ

ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմ
Ք. Երևան, Հալաբյան 41ա
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900013194049
ՀՎՀՀ 02506264

(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի 22
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570003667300100
ՀՎՀՀ՝ 01557589

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
«15» « 04 » 2015 թ. կնքված
N ԴՇԻԳ-ՇՀԱՊՁԲ-15-11/21-16 պայմանագրի

ՍԵԴԱՆ ԹԱՓՔՈՎ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՆՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
(ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ)

ՀՀ դրամ

Հ/Հ	Ապրանքների անվանումը	Ֆինանսավորման գումարը՝ ՀՀ Արդարադատության նախարարության 2015թ-ի արտաբյուջետային միջոցների հաշվին՝ ընդ որում			
		1-ին եռամսյակ	1-ին կիսամյակ	9-ը ամիս	Տարի
1.	Սեդան թափքով ավտոմեքենա (TOYOTA CAMRY)	-	15000000	15000000	15000000
	Ընդամենը՝				15000000 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամ

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով՝ ՀՀ դրամներով:

ԳՆՈՐԴ

ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմ
Ք. Երևան, Հալաբյան 41ա
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900013194049
ՀՎՀՀ 02506264

(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի 22
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570003667300100
ՀՎՀՀ՝ 01557589

(ստորագրություն)
Կ.Տ

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ
N ԴԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-15-11/21-16 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «15» 04 **2015թ.**

«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն **Վ. Գզրարյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1Հաշվի առնելով, որ **Ընկերությունը ՀՀ արդարադատության նախարարության՝ ի դեմս աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Արմեն Գևորգյանի** հետ ՇՀ գնման ընթացակարգով թիվ **ԴԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-15-11/21-16** **«սեղան թափքով ավտոմեքենայի գնման»** **«** 15 **»** 04 **2015թ.** կնքված գնման պայմանագրով Ընկերության ստանձնած պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Թիվ **ԴԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-15-11/21-16** **«սեղան թափքով ավտոմեքենայի գնման»** պայմանագրից բխող պարտավորությունների կատարումից խուսափելու կամ հրաժարվելու, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ **1500000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:**

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.2 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող «Ամերիաբանկ » ՓԲԸ -ում կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով <<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ >> ՍՊԸ -ն հանձնարարում է «Ամերիաբանկ» ՓԲԸ -ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում Պատվիրատուի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ /անվիճելի/ կարգով գանձել պահանջվող գումարը:

2. Այլ պայմաններ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև պայմանագով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի 22
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570003667300100
ՀՎՀՀ՝ 01557580

(ստորագրություն)
Կ.Տ.